

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

(Ըստ Բաբսի)

V.

Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի նպասակը.

Աշխատանքի դպրոց.

Դպրոցը կեանքի նախադուռը պէտք է լինի: Նա պարտաւոր է իր ամբողջ գործունէութիւնը յարմարեցնել այն պահանջներին, որ դնում է իւրաքանչիւր անհատի առջև կեանքը:

Սա մի այնպիսի ճշմարտութիւն է, որի դէմ այժմ ոչ ոք չպէտք է համարձակուի վիճել:

Բայց դժբախտաբար, հնութեան, բուսինայի ոյժը մեր կեանքում յաճախ այնքան զօրեղ է հանդիսանում, որ իր Զախ-Ջախիչ ծանրութեան ներքոյ խեղդում, սպանում է շատ այդպիսի ճշմարտութիւններ: Դպրոցը տակաւին—ժխտելով այդ ճշմարտութիւնը—շարունակում է մնալ կղզիացած, կեանքից կտրուած: Դեռ աւելի, նրանց իրարից անջատող վիհը ներկայումս այնքան խորացել և ընդարձակուել է, որ այլ ևս ոչ մի կամուրջ չի կարող նրանց միացմանը ծառայել: Հարկաւոր է լցնել, հաւասարեցնել այդ վիհը և դրանով ներդաշնակութիւն մտցնել դպրոցի և կեանքի յարաբերութիւններին մէջ:

Դա նշանակում է՝ պէտք է փոխել դաստիարակութեան տեսական ուղղութիւնը և աշակերտին գործնականօրէն դաստիարակել այնպէս, որ նա ոչ թէ ստրկանայ, այլ իշխի կեանքի վրայ: Իսկ կեանքին հրամայել, կեանքից չվախենալ կարող է միայն նա, որ ընդունակ է ինքնագործունէութեան, որի ստեղծագործական կարողութիւնը զարգացած է: «Միայն կենսական ոյժը կարող է շարժել կեանքը. գիտութիւնն այդ բանում օգտակար լինել կարող է միայն այն դէպքում, երբ նա կնպաստի այդ ոյժի զօրացմանը»—ասում է Պարստ:

Ինքնագործունէութեան և ստեղծագործական կարողութեան զարգացումը կախուած է մարդկային գործարանների գործունէու-

թեան զարգացումից: Այն ինչ մեր դպրոցը—իրեն նպատակ դնելով սաներին միայն գիտելիքներ հաղորդելը—ոչ միայն չի զարգացնում աշակերտի գործարանները, այլ ընդհակառակը, անգործութեան մատնելով նրանց, նրանց հետ միասին սպանում, ոչնչացնում է և աշակերտի կամքը:

Աշխատանքը, ֆիզիքական աշխատանքն է այն փրկարար ուղին, որ տանում է դէպ այդ նպատակը: Աշխատանքին պիտի փարի դպրոցը, եթէ կամենում է ապրել և կեանքի համար մի պիտանի գործօն լինել: «Գրքի դպրոցը» պէտք է վերածնունդի, մկրտուի և «Աշխատանքի Դպրոց» կոչուի, որովհետև միայն աշխատանքի դրօշակը կարող է նրան անկումից ազատել:

Ներկայ դպրոցը, ֆիզիքական աշխատանքին իր ծոցում տեղ չառնելով, մի կողմից՝ դրդուեցնում, խարխուլում է իր գոյութեան ու յարատևութեան հիմունքները, իսկ միւս կողմից՝ մեղանչում է ընդդէմ իր խնամքին յանձնուած մատաղ կեանքերի, մեղանչում է ընդդէմ մարդկութեան ու քաղաքակրթութեան:

Հնում դպրոցի ազդեցութիւնը մանուկի ընտանեկան կեանքի վրայ մեծ չէր: Փոքրիկ էր թէ դպրոցի տուած նիւթը և թէ այն ժամանակը, որ մանուկն անց էր կացնում դպրոցում: Աշակերտը տանը ահագին ժամանակ և հնարաւորութիւն ունէր իր ոյժերը զարգացնելու: Ընտանիքը նրան բազմաթիւ բնական առիթներ էր տալիս այն ունակութիւններն ու կարողութիւնները ձեռք բերելու, որոնք անհրաժեշտ են կեանքի համար: Մանուկը գործնականօրէն դաստիարակուած, պատրաստուած էր կեանքի համար:

Ներկայումս հիմնովին փոխուած են այդ պայմանները: Ընդարձակուել, մեծացել է դպրոցի տուած նիւթը. դրա հետ միասին մեծացել է նաև դպրոցի ազդեցութիւնը մանուկի ընտանեկան կեանքի վերաբերմամբ: Աշակերտը օրուայ մեծագոյն մասն անց է կացնում դպրոցում և դասերը պատրաստելու վրայ: Նրա բանւորական օրը իր դպրոցական օրն է: Դպրոցից և դասերից դուրս նա այնքան քիչ ժամանակ ունի, որ չի կարողանում նոյն իսկ հարկաւոր չափով հանգստանալ: Ուրեմն, եթէ մինչև անգամ նա ուղենայ էլ մասնակցել ընտանեկան աշխատանքներին և դրանով մարզել իր ոյժերը, լրացնել դպրոցի թողած կարևոր բացը, այնուամենայնիւ անկարող պիտի լինի—ժամանակ չունենալու պատճառով:

Դպրոցի այդ ֆնասակար ընթացքի դէմ յաճախ են բողոքել և բողոքում են շատ ծնողներ ու դպրոցական բժիշկներ: Սակայն նրանց ձայները փնացել են անարձագանք, փնացել են «ձայն բարբառոյ յանապատի», որովհետև նրանց դէմ կանգնած է քարացած բուսիւնան, կանգնած է տգէտ, խաւարամիտ ծնողների ահա-

գին մեծամասնութիւնը: Շատ հայրեր, շատ մայրեր, չհաւանալով իրենց ծնողական պարտականութիւնները գէպ իրենց դաւանները, սիրով ցանկանում են ազատուել սրանց դաստիարակութեան հոգսերից ու... այդ ամենը հանգիստ խղճով դպրոցի վրայ են ձգում: Բացի դրանից, ներկայ հասարակակազմի մէջ ազգաբնակչութեան ընդարձակ խաւերում այնքան մեծ է նիւթական կարիքը և օրուայ մի կտոր հացի համար գործադրած ուժերի վատնումը, որ երեխաների դաստիարակութեան խնդիրը, բնականաբար, պէտք է յետին տեղը բռնէր: Շատ ծնողներ դո՛ւ են դպրոցից, որ դասերով խեղդում է սաներին: Գո՛հ են, որովհետեւ աշակերտին այդչափ ծանրաբեռնելով ու զբաղեցնելով, նա՛ դպրոցը՝ ազատում է իրենց՝ երեխաների «չարութիւններից», նրանց մասին մտածելուց և աւելորդ գլխացաւանքից:

Պարզ է, որ դաստիարակութեան սխտեմի բարեփոխութեան գործում զրական աջակցութիւն սպասել այդպիսի ծնողներից և ընտանիքներից—միամտութիւն կլինէր: Իրական կեանքի պայմաններն այնպէս են դասաւորուած, որ երեխաների դաստիարակութեան ամբողջ գործը ընտանիքից դուրս գալով, դպրոցին է անցել: Եւ դպրոցն էլ անտարբերութեամբ շարունակում է իր այդօրինակ ֆլասատկար գործունէութիւնը—շարունակում է մի կողմից՝ հաւատարիմ հնութիւնից իրեն մնացած աւանդութիւններին, իսկ միւս կողմից՝ սիրով իր վրայ ընդունելով ընտանիքի դաստիարակչական պարտաւորութիւնները:

Կեանքը և ընտանիքը յարմարեցնել դպրոցի պահանջներին—անհնարին է և չպէտք է էլ լինի, հէնց թէկուզ այն պատճառով, որ դպրոցն է կեանքի ծնունդը և ոչ ընդհակառակը: Բայց դպրոցը յարմարեցնել կեանքի և ընտանիքի պահանջներին—հնարաւոր է և անհրաժեշտ, որովհետեւ դպրոցի կոչումն է՝ դաստիարակել մարդկանց կեանքի համար, որովհետեւ դպրոցը կեանքի նախադուռն է: Հետեւաբար, դպրոցը պէտք է անսայ կեանքի ձայնին, ըմբռնի նրա պահանջները և իր խնամքին յանձնուած մանուկներին դաստիարակի այնպէս, որ նրանք նախ՝ առողջ լինեն թէ՛ մարմնով և թէ՛ հոգով, և երկրորդ՝ որ իշխել կարողանան կեանքի վրայ:

Այստեղից հետեւում է, որ դպրոցը պէտք է ընդլայնի իր՝ գէպի սովորող մանուկներն ունեցած պարտականութիւնների շրջանակը, դրա հետ միասին ընդլայնելով և իր հիմնական նպատակը:

Դպրոցական լողաբաններ.

Իբրև օրինակ դպրոցական պարտականութիւնների շրջանակի ընդլայնման յիշենք դպրոցական լողաբանները:

Թէև հին չէ նրանց սկիզբը—ընդամենը 15—20 տարուայ կեանք ունեն—սակայն այդքան կարճ ժամանակի ընթացքում դպրոցական լողաբանները կարողացել են աճել, բազմանալ և դպրոցական մի անհրաժեշտութիւն ճանաչուել: Չնայած դրան, այդ նորամուծութիւնը ունի նաև բազմաթիւ հակառակորդներ հասարակութեան բոլոր խաւերից: Նրան դէմ են թէ ծնողները, թէ ուսուցիչները, թէ դպրոցական վարչութիւնները:

Առաջինները կարծէք թէ զրանում իրենց իրաւունքների յափշտակութիւնն են տեսնում, կամ աւելի ճիշտ՝ վախենում են հրեխանների մրսելուց, թիրևս դրանով յաճախ և այլ կողմնակի դրդիչներ քօղարկելով: Երկրորդները հրկիւղ են կրում այն բանից, որ դպրոցական լողաբանները կարող են փնտս բերել դպրոցին, նրա տնմիջական նպատակների իրադրծմանը արգելք հանդիսանալով: Սրանից դատ երկու առարկութիւն ևս ունեն նրանք.— ա. որ լողաբանները կնսպաստեն կարգապահութեան անկմանը դպրոցում, և բ. որ լողանալը շատ ժամանակ կլսի աշակերտի առանց այն էլ սուղ ժամանակից:

Վերջապէս դպրոցական վարչութիւններն էլ բերում են զուտ տնտեսական հիմունքներ: Նրանց կարծիքով, դպրոցական լողաբանների խնդիրը կապուած է զբամական ահագին ծախքերի հետ, որ մեր դպրոցներն անկարող են անելու: Կան ուրիշ հակառակորդներ ևս, անկախ այդ երեք խաւերից: Նրանք էլ մերժում են դպրոցական լողաբանների գործադրութիւնը, որովհետև զրանում տեսնում են սկիզբը այն նորամուծութիւնների, որոնք կարող են միայն զօրեղացնել հասարակութեան որոշ դասակարգերի յաւակնութիւնն ու պահանջները ի փնտս միւս դասակարգերի:

Սակայն ընդդէմ դպրոցական լողաբանների եղած այդ բոլոր առարկութիւններն էլ անզօր են ու ոչինչ հանդէպ այն օգտի, որ կարող են տալ այդ լողաբանները: Սովորող մանուկների առողջութիւնը, նրանց ֆիզիքական բարօրութիւնը մեզ համար բարձր պիտի լինի ամեն բանից: Նրա դիմաց պէտք է լուեն միւս բոլոր նկատողութիւնները: Եւ դպրոցական լողաբանները ամենալաւ միջոցն են աճող սերնդի ֆիզիքական առողջութեան: Ո՛չ օդափութութիւնը, ո՛չ դասարանների մաքրութիւնը չեն կարող նպաստել օդի մաքրութեանն այնպէս, ինչպէս աշակերտների մարմնի մաք-

բութիւնը, ուրիշ խօսքով՝ ինչպէս աշակերտների յաճախ լողանալը: Բացի դրանից, լողանալը թարմացնում է յոգնած աշակերտի նեարդային համակարգութիւնը, բարւոքում է նրա ինքնագզացութիւնը և ապահովում նրա մարմինը զանազան փաստակար ազդեցութիւններից:

Դպրոցական լողարանները անհրաժեշտ են և մի այլ տեսակէտից. նրանք ոչ միայն մարմնի առողջութեանն են նպաստում, այլ և մաքրութիւնը, մաքրասիրութիւնը դարձնում են աշակերտի համար մի գեղեցիկ սովորութիւն, բնաւորութեան մի գիծ: Իսկ մարմնի մաքրութեան սովորութիւնը, սերտ կապ ունենալով բարոյական մաքրութեան հետ, օգտակար է, ուրեմն, աշակերտի հոգեկանի տեսակէտից ևս: Հետևաբար, դպրոցական վաննաները, նրանցից հմտօրէն օգտուելու դէպքում, կարևոր են նաև իրենց դաստիարակչական միջոց:

Թէև դպրոցական լողարանները շատ կարճ կեանք ունենան՝ ընդամենը 15—20 տարուայ անցեալ—սակայն նրանց մասին եղած հաշուետւութիւններն արդէն անհերքելիօրէն ապացուցել են նրանց անհրաժեշտութիւնը: Բազմաթիւ փաստերով ապացուցուած իրողութիւն է արդէն, որ լողարանները ամրապնդում են մանուկի առողջութիւնը, ապահովում են նրան մրսելուց, զօրացնում են մաքրասիրութեան զգացումը նրանում և դրանով միաժամանակ նպաստում նրա բարոյական մաքրութեանը:

Այդ փաստը այսօր խոստովանում են ոչ միայն ուսուցիչներն ու դպրոցական բժիշկները, այլ և հասարակութեան զանազան խաւերից շատ-շատերը: Դրա համար էլ ամենեւին զարմանալի չպէտք է թուի այն, որ օրէցօր թօւլանում են դպրոցական լողարանների հակառակորդների ձայները և նրանց՝ լողարանների՝ անհրաժեշտութեան գիտակցութիւնը, իրենց սահմաններից դուրս գալով, սկսում է ամենուրեք նուաճումներ անել¹⁾:

Սա ի՞նչ է ցոյց տալիս.—այն, որ ներկայումս դպրոցի նպատակը շատ աւելի ընդարձակ է, քան հնում և ուրեմն, հիմնովին սխալ է տարածուած այն կարծիքը, թէ դպրոցը միայն և միայն

1) Մեր դպրոցներում միայն վերջերումս սկսեցին ուշադրութիւն դարձնել մի շատ կարևոր եւ միեւնոյն ժամանակ հեշտ վերանալի հանգամանքի վրայ—ձեռները լուսնալու համար յարմարութիւն ստեղծելու վրայ: Այս հարցը Գերմանական դպրոցական աշխարհում արծարծուեց վերջին տարիները միայն, մինչ դեռ Անգլիայում վաղուց արդէն վճռել էին այն: Այսպէս օրինակ, Լօնդօնի բոլոր նօրադոյն դպրոցական շէնքերում կան յարմարութիւններ, որ բոլոր սովորող մանուկներին հնարաւորութիւն են տալիս դպրոց գալիս, դասերից առաջ, իրենց ձեռները լուս-

մի ուսուցանող հիմնարկութիւն է, վարժարան: Ո՛չ, ճիշտ է, նաև ուսուցանող հիմնարկութիւն է, բայց աւելի՛ դաստիարակող հիմնարկութիւն է և իբրև այդպիսին իր նպատակին լաւ ծառայել կարող է միայն այն ժամանակ, երբ կկարողանայ օգտուել մանկավարժական այն միջոցներէց, որ ներկան առաջարկում է նրան:

Ձեռագործի և Տնտեսութեան դասեր.

Դաստիարակչական միջոցների թուին են պատկանում նաև ձեռագործի ու տնտեսութեան դասերը: Վերևում արդէն տուինք այն հոգեբանական-մանկավարժական տեսական հիմունքները, որոնք անհրաժեշտ են կացուցանում այդ առարկաների ներմուծումը դպրոցում: Մնում է այժմ ցոյց տալ, թէ գործնականում ինչպէս պէտք է իրականացնել այդ տեսութիւնը:

Դրան կպատասխանի հետևեալ փոքրիկ հատուածը:

Ձեռարուեստի սկզբնական ուսուցումը.

Ամեն մի երեխայի բնութեանը յատուկ է գործելու, մի բան անելու ձգտումը, որ երևան է զալիս նրա զարգացման բոլոր աստիճաններում:

Հիմք ընդունելով այդ ձգտումը, ձեռարուեստի ուսուցման համար—հէնց առաջին տարուանից—պիտի դնել հետևեալ կարևոր պահանջները և նրանց իրականացմանը ձգտել.—

1. Աշխատանքը պիտի լինի աշխոյժ և հետաքրքրի մանուկին: Դա նշանակում է՝ մանուկը ձեռարուեստի դասերին պէտք է սովորի շինել այնպիսի իրեր ու առարկաներ, որոնք սերտ կապ ունեն իր խաղերի և նախադպրոցական խաղերի հետ:

2. Շինելիք առարկաների նիւթը պիտի լինի մանուկի համար մատչելի, իսկ դրա համար պահանջւող գործիքները՝ պարզ ու անվտանգ:

3. Մաքրութիւնն ու կարգապահութիւնը պիտի թափառեն ամբողջ աշխատանքի ընթացքում, որովհետև նախ՝ դրանք չափազանց կարևոր են մանուկի առողջութեան և աշխատանքի արդիւնաւէտութեան տեսակէտից, և երկրորդ՝ առանց դրանց դպրո-

նալու: Անժխտելի է ծնունդի կատարած մեծ դերը մարմնի առողջութեան խնդրում: Եւ նա, ով այդ մասին ուղիղ հասկացողութիւն ունի, նա միայն կարող է ըմբռնել, թէ այդ «չնչին» քայլը որպիսի մեծ յառաջադիմութիւն է՝ Անգլիայի դպրոցական մանկավարժութեան եւ ժողովրդական առողջապահութեան տեսակէտից:

Իսկ մեզանում հայկական դպրոցներում... լսելն աւելի քարոք է:

ցը կառավարուել չի կարող: Պէտք է անպայման չէզոքացնել, նուազագոյնի հասցնել այն բոլոր պայմանները—ինչպէս օրինակ՝ փողին, գործիքների պատճառած վէրքերը ևն—որոնք կարող են ֆեոդալար լինել մանուկի առողջութեան համար և խանգարել աշխատանքի կանոնաւոր ընթացքը:

Եւ պէտք է ասել, որ բոլորովին հնարաւոր է այդ պայմանների իրագործումը: Թերեւս դրանց մէջ մի քիչ դժուար է իրականացնել 1 և 2 կէտերը, բայց ոչ անհնարին: Բարեբախտաբար գոյութիւն ունեն, տեխնիկայի տեսակէտից, այնպիսի պարզ աշխատանքներ, որոնք կատարելապէս համապատասխանում են այդ պայմաններին:

Այդ աշխատանքների շարքում առաջին տեղում պիտի յիշել պլաստիլինից կամ կաւից իրեր կաղապարելը (лѣпка), որը սակայն պահանջում է առանձին նախազգուշութիւններ մաքրութեան պահպանութեան համար: Այնուհետեւ գալիս է թղթից կամ խաւաքարտից պարզ բաներ շինելը, որը կարելի է միացնել նկարչական վարժութիւնների հետ:

Այդպիսի զբաղմունքներ կարող է ունենալ ամբողջ դասարանը, առանց առանձին դժուարութիւնների և միեւնոյն ժամանակ չնչին ծախքով, այնպէս որ իրենք իրենց ջրում են նրանց արժէքի մասին եղած առարկութիւնները:

Վերջին ժամանակ մի քանի տեղերում փորձեր են արուել առաջին տարուայ իրազննութիւնը—ինչպէս նաեւ ընթերցանութիւնը, գրութիւնը և համրանքը—միացնել վերոյիշեալ ձեռարուեստների հետ: Ոչ միայն այդ, այլ նոյն իսկ փորձեր են եղել այդ առարկաների ծանօթութիւնները հանել ձեռարուեստից, ինչպէս հանում են քերականական կանոնները կարգացած յօդուածներն ու գրած շարադրութիւնները վերլուծելով:

Դպրոցական առաջին տարուայ ուսուցման բարեփոխութեան անհրաժեշտութիւնը.

Թող այս խորագիրը ոչ որի չշփոթեցնի Փորձը ցոյց է տալիս, որ վերոյիշեալ պայմանների իրագործումով բոլորովին հնարաւոր է անհրաժեշտ բարեփոխութիւնը մացնել դպրոցական առաջին տարուայ ուսուցման գործում և բաւարար հետեանքների հասնել:

Ամենքը համաձայն են, որ մեր ներկայ դպրոցական սկզբնական ուսուցումը կարօտ է հիմնական բարեփոխութեան: Դրան

հիմք պիտի ծառային գլխավորապէս Ֆրեօբէլեան գաղափարները և սրանց բերած գործնական զբաղմունքները:

Բայց չպէտք է մոռնալ, որ բարեփոխութեան հետ կապուած են նաև մի քանի ուրիշ կարևոր հարցեր, որոնց թուում ամենից նշանաւորն է երեսայի ֆիզիքական զարգացման խընդիւրը:

Ներկայ դպրոցական ուսուցման հէնց առաջին տարուանից դանդաղում, կանգ է առնում այդ զարգացումը, շնորհիւ նստակեցութեան: Դպրոց յաճախելով, հէնց առաջին օրերից մի ահագին յեղաշրջում է կատարւում մանուկի կեանքում: Աշխոյժ, ազատ և ամբողջովին իր խաղերին նուիրուած մանուկը դատապարտւում է մի անշարժ, տաղակալի կեանքի, դատապարտւում է անվերջ նստելու:

Սրան զուգընթաց, մանուկի մարմնի զարգացման տեսակէտից չափազանց փնասակար են մի շարք այլ հանգամանքներ ևս, որոնք ուշադրութեան առարկայ պիտի լինեն դպրոցի ու մանուկների բարեկամների համար: Այդպէս օրինակ, անհրաժեշտ է քննութեան առնել, թէ որքան նպատակայարմար է ձեռագիր և տպագիր այբուբենի միաժամանակ ուսուցումը, կամ՝ ինչպիսի գրութիւն պիտի ընդունել — ուղիղ թէ՞ թեք, կամ գրելու ժամանակ տետրակն ինչպէս պիտի դնել — ուղիղ թէ՞ թեք կայլն:

Թէև այս խնդիրներն տակաւին վիճելի են և իրենց վերջնական պատասխանը դեռ ևս չեն ստացել, բայց և այնպէս անժխտելի է իրաւացիութիւնն այն օրաւուր աճող պահանջի, որ ասում է, թէ դպրոցն անպայմանօրէն պիտի խուսափի այն ամենից, ինչ որ փնասում է աշակերտի առողջութեանը, մանաւանդ ինչ որ նպաստում է աչքերի կարճատեսութեանը և ողնաշարի ծռուելուն:

Անշուշտ, չի կարելի հերքել, որ դպրոցական առաջին տարիներում երեսայի առողջութեանը ամենամեծ չափով փնաս է հասցնում — այսպէս ասած — գրքային ուսուցումը: Ինչպէս դժբախտ էին է ասում, ներկայ դպրոցում թագաւորում են գրել-կարդալու ճանճրալի դասերը, իսկ դիտողութեան ու գործնական վարժութիւնների հետ կապուած առարկայական դասերը վտարուած են այնտեղից: Այդ պատճառով էլ ներկայ դպրոցում հարկաւոր են ոչ թէ աշխատանքի սեղաններ ու արհեստանոցներ, այլ նստաբաններ, Դրա հետ միասին, ներկայ դպրոցում արհամարհուած են մկանների վարժութիւնները, աշակերտի ինքնագործունէութիւնն ու բնազդային կեանքը:

Ահա սրանք են գլխավոր պատճառները այն խեղաթիւրումների, որոնք ծնունդ են առնում դպրոցական առաջին տարիներ-

բում և յայտնի են «դպրոցական հիւանդութիւններ» ընդհանուր անունով:

Որ խեղաթիւրումների փաստը կայ և գոյութիւն ունի, դա ապացուցել են դպրոցական բժիշկները և կեանքում պատահող բազմաթիւ օրինակները: Ընդունելով այդ ցաւալի փաստի գոյութիւնը, պիտի ընդունենք նաև, որ մենք պարտաւոր ենք վերացնելու այդ երևոյթն առաջացնող պատճառները: Ահա հէնց այստեղից էլ պէտք է սկսուի ներկայ դպրոցի բարեփոխութեան ցանկալի գործը, բարեփոխութեան, որ հնարաւոր է իրականացնել, մեծամեծ դժուարութիւնների այդ ճանապարհի վրայ չհանդիպելով:

Այժմ տեսնենք, թէ ինչ բանի հետեանք է գրքային ուսուցումը, որ ներկայ դպրոցի ամհնարացասական կողմերից մէկն է հանդիսանում:

Ներկայ դպրոցը, իր «բարձրից» եկած ծրագրերով, պահանջում է մանուկից որոշ ունակութիւն կարգալու, գրելու ու համբանքի և ըստ այս պահանջի էլ բաշխում է առաջին երկու տարիների շարաթներն ու ամիսները: Բայց արդե՞օք այդ ունակութիւնն այնքան անհրաժեշտ է, որ հարկ լինի նրա համար զոհաբերել ամեն ինչ, նոյն իսկ մանուկների ամենաթանկագին սեպհականութիւնը՝ առողջութիւնը: Իհարկէ ոչ. դա մի ֆլասակար և սխալ հասկացուած անհրաժեշտութիւն է, որ մենք 7—8 տարեկան երեխայից պահանջում ենք կատարեալ տէրը լինել այդ ունակութեան, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ այդ հասակում բոլոր երեխաները յաճախ չեն ունենում այդ ունակութիւնը ձեռք բերելու համար անհրաժեշտ մտաւոր հասունութիւնը:

Այս վերջին հանգամանքի վրայ մեղանում ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում: Մինչ դեռ նորակոչ զինուորներին մանրագնդին քննութեան են ենթարկում և ծառայութեան համար պիտանի դտնելուց յետոյ նոր միայն ընդունում զինուորների շարքը, երեխաներին դպրոց տալու ժամանակ ոչ մի քննութիւն: Բաւական է, որ երեխան հասաւ այս ինչ տարիքին. նրան տանում են դըպրոց, առանց ի նկատի ունենալու նրա ֆիզիքական ու մտաւոր դարգացման աստիճանը: Մոռանում են, որ այդ տեսակէտից երեխաների միջև եղած տարբերութիւնը պակաս չէ, քան 20—21—ամեայ զինուորացուներինը: Սրա հետեանքը լինում է այն, որ դպրոցում կիրառող մանկավարժական միջոցները—սխալ միջոցները—չափազանց ֆլասակար գործունէութիւն են անում այդ քնքոյշ արարածների ֆիզիքականի յետագայ դարգացման վրայ:

Վերջապէս ժամանակ է վերագնահատութեան ենթարկելու այդ կործանարար փաստը և ձեռք քաշելու մի ֆլասակար և միև-

նոյն ժամանակ աւելորդ ռիսկից—մեր երեխաների առողջութիւնը վտանգի ենթարկելու ռիսկից:

Մեր դպրոցը վերաբերուում է մանուկին, որպէս մի էակի, որ անցեալ ասած բանը չունի: Նա խլում է նրան իր սիրելի և բազմազան աշխարհից, որտեղ մինչև այդ ապրել է, և բերում—ձգում է մի այլ խորթ աշխարհ: Նա ուրախ ու զուարթ խաղում, վազվզում էր տանը, բակում, պարտիզում, փողոցում, հրապարակներում, իսկ այժմ նրան փակում են մի սենեակում, որ ոչ մի առնչութիւն չունի նրա նախադպրոցական կեանքի հետ: Դասարանի դատարկութիւնն ու անհրապոյր պարզութիւնը, նստարանների երկրաչափական երկար շարքերը ճնշում են նրան: Էլ չկան այստեղ նրա սիրելի աւաղակոյտերը, աղիւսները, քարի ու փայտի կտորտանքները. չկան բազմազան, բազմաթիւ ու գունազեղ խաղալիքները: Նրանց փոխարինում են գրատախտակը, մատիտը, գրիչն ու գիրքը: Ուրախ շաղակրատութեանն ու խաղերին փոխարինում են մոայլ լուծութիւնը և ուսուցչի հրամանով աշխատելը. խաղերի ու զբաղմունքների ընտրութեան ազատութեանը, գիւտերին և փորձերին՝ լսելն ու պասսիւ նմանողութիւնը:

Այս բոլորից յետոյ, միթէ իսկապէս հրաշք չէր լինի, եթէ մանուկները իրենց խորթ չզգային այս բոլորովին օտար միջավայրում, ուր մի նոր, օտար մարդ գործ է սկսում նրանց հետ և կոչում նրանց իրենց ազգանունով,—մի բան, որ շատ խորթ է նրանց թէ սրտի և թէ լսելիքի համար:

Աւելի համարձակ բնաւորութիւնները փորձում են բողոքել այդ ճնշման դէմ և յաճախ ուղղակի յայտնում են ուսուցչին, որ դպրոցը չեն սիրում, որ ուզում են թողնել ու տուն գնալ: Սակայն թոյլերն ու պակաս ինքնուրոյնները շուտով կորցնում են իրենց արիութիւնն ու ինքնավստահութիւնը, այսինքն՝ հէնց այն յատկութիւնները, որոնց շնորհիւ նրանք պիտի մաքառէին և յաղթահարէին առաջին դժուարութիւնները:

Միւս կողմից, ուսուցչի համբերութիւնն ու սիրալիրութիւնը կամաց-կամաց «վերացնում են այդ դժուարութիւնները»: Երեխաներն ընտելանում են դպրոցի բնոյթին և իրենցից պահանջող աշխատանքների տեսակներին: Մինչև անգամ նրանցից ոմանք սկսում են նաև սիրել դպրոցը, որից զրկուելը նրանց համար ցաւալի կլինէր: Ընկերական կեանքն ու դպրոցի մի քանի ուրիշ դրական կողմերը նուաճողական ոյժ ունին:

Բայց, իհարկէ, դպրոցի այդ բոլոր բարեբար ազդեցութիւնները շատ աւելի հեշտութեամբ ձեռք կրերուեն և աւելի արդիւնաւէտ կլինեն այն ժամանակ, երբ ներկայ գրքային դպրոցը կվերածուի աշխատադպրոցի (Arbeitschule), երբ իւրաքանչիւր

գիտութեան իւրացումը պայմանաւորուած կլինի մանուկի գործնական աշխատանքով, սեպհական փորձերով, ուրիշ խօսքով, երբ դպրոցը կկազմի նախադպրոցական կեանքի անմիջական շարունակութիւնը:

Այստեղից արդէն հետեւում է, որ աշխատանքը դպրոցում չպէտք է լինի զուտ մտաւոր, ինչպէս որ ներկայումս է, այլ պիտի ընդգրկի մանուկի ուշալ կեանքը և հաշուի առնի նրա՝ իր հետ դպրոց բերած գաղափարների ամբողջութիւնն ու կամքի զարգացման աստիճանը:

Այդ ուղիղ ճանապարհը, որ տանում է դէպի սկզբնական ուսուցման այդօրինակ բարեփոխութիւնը, ամենից առաջ գծել է Թրիգորի Թրեբէլը: Եւ նրա ցուցմունքները յաջողութեամբ իրականացնում են այն բոլոր դպրոցներն ու կրթական հաստատութիւնները, որոնք ազատ են սովորական տարրական դպրոցների վրայ ծանրացած ուժիմից:

Իերլինի Պեստալոցցի—Թրեօբելեան Տունը և նրան նման միւս դաստիարակչական հիմնարկութիւնները կարող են ծառայել որպէս օրինակ, թէ բարեփոխուած դպրոցում ինչպէս պիտի տանել ուսուցումը դպրոցական առաջին տարիներում:

Դպրոցի միջնորոշող սրբան պայծառ և համապատասխան լինի մանուկների հոգուն, սրբան աւելի նա կարողանայ գրաւել սովորողների մասնակցութիւնն այնպիսի խնդիրներում, որոնք նրանց համար և՛ գրաւիչ են, և՛ մատչելի, այնքան աւելի զօրեղ կլինի դպրոցի ազդեցութիւնը աշակերտութեան վրայ, նամանաւանդ մանկահասակ աշակերտութեան վրայ: Այդպիսի դպրոցում բնաւորութեան այն բնորոշ գծերը, որոնց սաղմերը մանուկները իրենց հետ բերում են դպրոց, ոչ թէ կմեռնեն ու կոչնչանան, այլ ընդհակառակը, կաճեն ու կզօրանան: Այնտեղ, մանուկների մեծամասնութեանը յատուկ կենսութրախութիւնը, ինքնուրոյնութիւնը և ստեղծագործական կարողութիւնը, իրենց աճեցողութեան համար նպատաւոր պայմաններ գտնելով, կզարգանան և կդառնան մի անգնահատելի գանձ աշակերտների ապագայ կեանքի համար:

Բայց այստեղ հետաքրքիր է մի հարց.—ինչ և ինչպիսի զբաղմունքներ պիտի տալ երեխաներին նրանց զարգացման տարբեր աստիճաններում:

Այս հարցի պատասխանը շատ զիջեցիկ կերպով տալիս է ինքը Թրեօբէլը: Նա ասում է մօտաւորապէս այսպէս, «Ինչ որ լաւ է, զեղեցիկ իմ դաստիարակչական գործունէութեան մէջ, այդ բոլորը ես ուսել եմ երեխաներից: Երեխաներն են ցոյց տուել ինձ այն ճանապարհը, որով պիտի ընթանայ դաստիարակչութիւնը:

Դպրոցական առաջին տարիների ուսուցման համար յանձ-

նարարելի մի քանի զբաղմունքներ մենք մատնանշեցինք արդէն: Դրանք էին՝ կաւից կամ պլաստիլինից կաղապարումը, ձողիկնե-
րից կամ խաւաքարտից զանազան իրեր պատրաստելը, իրենց
ձեռագործները գունազարդելը ևլն: Դրա վրայ այժմ պիտի աւե-
լացնենք, որ

ա. Զբաղմունքներէ մի տեսակները կապուած պիտի լինեն
դիտողական (наглядный) դասերի հետ:

բ. Նրանց նպաստակը պիտի լինի՝ սովորեցնել երեխաներին
աւարկաները լաւ տեսնելու, դիտելու, և

գ. Սովորեցնել ըմբռնելու առարկաների բոլոր մանրամաս-
թիւններն ու առանձնայատկութիւնները: համաձայն նրանց մէջ
եղած պատճառական կառակցութեան:

Ախալ է այն կարծիքը, թէ այդ խնդրում երեխաների նկատ-
մամբ պէտք է խստապահանջ չլինել: Այդ տեսակէտից նոյն իսկ
շատ աւելի կարելի է պահանջել երեխաներից, քան այն, որ սո-
վորաբար ենթադրում են մեծերը: Դրա անհերքելի աղացոյցն են
այն հարցական «ինչու»-ները, որ շարունակ առաջադրում են
երեխաները:

Ըստ այսմ, զարգացական ուսուցումը պիտի մանուկ-
ների համար մի անվերջ շղթայ հետախուզութիւնների և գիւտերի:
Դրքային գիտութիւնը, որ մեռած է և անվիշտան, պիտի վերա-
ցուի. նրան պիտի փոխարինի փորձնական գիտութիւնը: Առա-
ջինը ձեռք է բերում ուսուցչի առաձններն ու խօսքերը կրկնելով
ու անգիր անելով, իսկ երկրորդը՝ արդիւնք է ստեղծագործող
աշխատանքի և այն մեծ պայքարի, որ մղում է մանուկը շրջա-
պատող կեանքի, գլխաւորապէս բնութեան դէմ:

Եզրակացութիւնը պարզ է. գործնական աշխատանքների
ներմուծումը դպրոցում միաժամանակ հանդիսանում է նաեւ որպէս
խորհրդանշան դաստիարակութեան սխտեմի բարեփոխութեան:
Ահա այդ դէպքում միայն իրականութիւն կդառնան հետեւեալ
նշանաւոր խօսքերը. «Նա միայն կարող է իսկական ուսուցիչ
կոչուել, որ սովորեցնում է աշխատանքի, ֆիզիքական աշխա-
տանքի արուեստը»:

Աւելորդ չենք համարում, որպէս մի իլլիւստրացիա, բերել
այստեղ Լայպցիգի Ուսուցչական Միութեան որոշումները սկզբնա-
կան ուսուցման բարեփոխութեան մասին:

Սկզբնական ուսուցման բարեփոխութեան հիմունքները.—

1. Սկզբնական ուսուցման ներկայ դրութիւնը փաստում է
երեխաների մտաւոր և ֆիզիքական զարգացմանը, որովհետեւ նա՝
այդ ուսուցումը՝ սկսում է շատ վաղ, ծանրանում է առաւելապէս
աշակերտի միակողմանի մտաւոր զարգացման վրայ և պահանջում

է անագին ժամանակ: Դրանից տուժում է մանուկների յետագայ ուսուցման ամբողջ գործը:

II. Մանուկների հանգստութիւնն ու առողջ զարգացումն ապահովելու համար հարկաւոր է. —

1. Գրել-կարդալը բոլորովին դուրս ձգել դպրոցական առաջին տարուայ դասընթացից, իսկ համրանքը պահել՝ որպէս միջոց հմիայն դատողականութեան:

2. Կրճատել առաջին տարուայ շաբաթական դասերի թիւը, ասցնելով այն մինչև 12 դասի:

3. Կօլլեկտիւ դասաւանդումն թէ՛ դասարանում և թէ՛ բաց օդում, այսինքն՝ այնպիսի դասաւանդումն, որ ընդգրկէր փոքրահասակ աշակերտների բոլոր մտաւոր ու ֆիզիքական կարողութիւնները, որ ամենալաւ ձևով նախապատրաստէր նրանց՝ դպրոցական ապագայ զբաղմունքների համար:

III. Սկզբնական ազատ ուսուցման այս պահանջի իրականացումը հնարաւոր է նման իսկ ներկայ տարրական դպրոցի առաջին 3 տարիների ծրագիրը պահելու դէպքում, բայց հնարաւոր է, եթէ

1. Միևնոյն ուսուցիչը կղեկավարի տուեալ դասարանը 3 տարուայ ընթացքում.

2. Ուսուցչի համար պարտադիր կլինի միայն մինչ 6-րդ դասարանի ծրագիրն անցնելն ու արդիւնքի հասնելը, և

3. Ուսուցիչը այդ սահմաններում, ազատուելով դպրոցական և դասարանական ծրագրերի կաշկանդումներից, կատարեալ ազատութիւն կունենայ ընտրելու ուսուցման նիւթն ու դասաւանդութեան ձևերը:

Յ. Տե՛ր Յակովբեան.

(Շարունակելի)